

Վ. Մ. Գարշին. «ԱԶԴԱՆՇԱՆ» Թարգմանութիւն ռուսերէնից. 16 էր. դ. 2 կ.
Բազու 1902 թ.

«Ազգանշանը» („Сигналъ“) Գարշինի ամենայաջող պատմութեանը մէկն է և կրում է նրա համակրելի տաղանդի կնիքը:

Այդ պատմութեանը արդէն մի անգամ Թարգմանուել է հայերէն: Շատ կարելի է, որ այս գրքոյկը նոր Թարգմանութիւն չէ, այլ հնի արտատպութիւն:

Թարգմանութիւնը բաւական յաջող է:

Տ. Յ.

Գիւի դը-Մօպասան. «ՀԱՅՐ ՄԻԼՈՆԸ». Թարգմ. Ա. Տ.-Պ. 15 էր. գինը 2 կոպ.
Բազու 1902 թ.

Պատմութեանը նիւթը վերցրած է ֆրանս-պրուսական պատերազմի ժամանակից:

Ֆրանսիացի մի ծերուկ, «Հայր Միլոնը», զաղտնի սպանում է գերմանացի զինուորներին, ի վերջոյ բռնուում է և մահուան պատժի ենթարկուում:

Պատմութեանը, ինչպէս Մօպասանի երկերի մեծ մասը, դրուած է խտացած, զօրեղ և մոայլ ոճով:

Թարգմանութիւնը վատ չէ, թէև մէջը պատահում են անհարթութիւններ, որոնք բացատրուում են Թարգմանչի անփորձութեամբ, օրինակ պ. Ա. Տ.-Պ. կարծում է, թէ հայերէն է այսպիսի մի նախադասութիւն. «Ծաղիկների անուշահոտութիւնը խառնուում է բաց ակոռների ծանրաշունչ հոտի և գոլորչու հետ բորբոսնած աղբակոյտի, որի վրայ լիքը հաւեր քշուջ են անում»:

Տ. Յ.

Պրօֆ. Ի. Բերդնիկով. «ՆՈՐ ՊԵՏՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆԸ ԴԵՊԻ ՆՐՈՇՆ» Թարգմ. Գեորգ Ալթունեան. խմբ. Ս. Տիգրանեան. 121 էր. գինը 25 կ. Ալեքսանդրապոլ 1902 թ.

Պրօֆ. Բերդնիկովի գրքոյկի Թարգմանութեամբ լաւ դործի անաջող սկզբնաւորութիւն է դրւում:

Պ. Ա. Տիգրանեան շատ համակրելի միտք է յղացել տալ ընթերցողներին մի շարք հանրամատչելի իրաւաբանական գրքոյկներ:

Սակայն հանրամատչելի գրքոյկները պէտք է գրուած լինեն թեթեւ ու կենդանի ոճով և, եթէ ինքնուրոյն չեն, պէտք է թարգմանուած լինեն նոյնպիսի ոճով: Մինչդեռ պրոֆ. Բերդնիկովի գրքոյկը գրուած է ուրա պրոֆէսորների մեծամասնութեանը յատուկ անհոտ ու անհամ ոճով, որով կարելի է դրել միայն արձանագրութիւններ, և թարգմանուած է «ճեմարանական» ջերմոցային ոճով, որի արժանաւորութիւնը կանոնաւորութիւնն է, իսկ պակասութիւնը՝ խօսակցական լեզուին յատուկ կենդանութիւնից զուրկ լինելը:

Թարգմանութեան պակասութիւններից մէկն էլ ստրկականութիւնն է, որ հասնում է այն աստիճանի, որ ուսուցիչ безопасность բառը «անվտանգութիւն» է թարգմանած, մինչդեռ «անվտանգութիւն» կը նշանակէ ոչ թէ ապահովութիւն, այլ վտանգաւոր չը լինելը:

Այն էլ պէտք է նկատել, որ գիտական բառերի թարգմանութիւնը տեղ-տեղ անյաջող է, տեղ-տեղ էլ հակասական (նոյն բառը երկու տեսակ է թարգմանուած): Աչքի է ընկնում մասնաւոր процессия բառի սխալ թարգմանութիւնը, որի շնորհիւ գրուածքի իմաստը չի թելուծւում է. «արգելւում է կրօնական յուզարկաւորութիւններ (процессия) անել եկեղեցուց դուրս...» Յուզարկաւորութիւն կը նշանակէ միմիայն похоронная процессия.

Մոռացայ ասել, որ պրոֆ. Բերդնիկովը լուսաբանում է հարցը յետադիմական տեսակէտից:

Տ. Յ.

Պ. ԴԱՂԲԱՇԵԱՆԻ ՊԱՏԱՍԽԱՆԻ ԱՌԹԻՒՆ *).

Պ. Դաղբաշեանը մեր գրախօսութեան դէմ նրա ուս-հայերէն բառարանի մասին («Մուրճ» 1902 թ. սեպտեմբեր) տպել է մի պատասխան («Մուրճ», հոկտեմբեր), որը մենք առանց ուշադրութեան կը թողնէինք, եթէ «Մուրճի» ընթերցողները բոլորն էլ լեզուային և բառարանագրական հարցերին լաւ ծանօթ լինէին և պ. Դաղբաշեանի «Պատասխանը» կարգալիս՝ ուշի ուշով նրան համեմատէին մեր գրախօսութեան հետ: Բայց քանի որ այսպէս չէ լինում, պ. Դաղբաշեանի պատասխանը ընդունակ է

*) Խմբագրութիւնս մինչև այժմ անկարող եղաւ տպել այս յօդուածը, որ մօտ երկու ամիս առաջ է գրուած: Ե. Խ.